ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 15 >> ապրիլի 2016 թվականի N 27 ք.Գյումրի

ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղելու կարգը սահմանելու մասին» թիվ 546-Ն որոշմամբ սահմանված N:1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ալբերտ Մարգարյանին 2016 թվականի մայիսի 16-ից 20-ը /ներառյալ/ և մայիսի 23-ից 27-ը /ներառյալ/ գործուղել ք.Երևան՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 24.11.2014թ. թիվ 1094-Ա որոշմամբ հաստատված ծրագրով անցկացվող վերապատրաստման դասընթացներին:
2. Ալբերտ Մարգարյանի վերապատրաստման ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը վերապահել վարչության պետի տեղակալ Լեոնիդ Դավթյանին:
3. Գործուղման տևողությունը՝ 10 աշխատանքային օր:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է